ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԸ

31.05.2016 15:13

Մայիսի 31-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի վարչական շենքի բակում տեղի է ունեցել Մխիթար Գոշի հուշարձանի բացման արարողությունը:

Վաղ միջնադարի Վարդապետի դիմաքանդակի հեղինակն է հայտնի քանդակագործ, քանդակային կոմպոզիցիաների վարպետ Ղուկաս Զուբարյանը (Զուբարը) (16.06.1923 - 23.03.2009):

Հուշարձանը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին նվիրաբերել է ՀՀ վաստակավոր բժիշկներ, բարերարներ Կառլեն և Սառա Եսայանների ընտանիքը:

Միջոցառումը սկսվել է Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի աղոթքով:

Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը: Շնորհակալություն հայտնելով ներկաներին՝ նա մասնավորապես նշել է, որ Մեծ Վարդապետի թողած ավանդն անգնահատելի է Հայաստանի հոգևոր և աշխարհիկ կյանքում: Գոշն աչքի է ընկել միջնադարյան աշխարհին դեռևս անհայտ բարոյականության նոր և ժամանակակից լուծումներ առաջարկելու խիզախությամբ և մինչ օրս կիրառելի պատգամներով: Անդրադառնալով Գոշի փիլիսոփայությանը և աշխատություններին՝ Արա Ջոհրաբյանն ընդգծել է, որ 12-րդ դարում, երբ Եվրոպան խաչակրաց արշավանքներ էր ձեռնարկում, Հայաստանի հեռավոր վանքերից մեկում Մխիթար Գոշն առաջարկում էր ՕՐԻՆԱՊԱՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ հետաքրքիր մոդել, ինչը իրավական մտքի գյուտ էր:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը: Ա. Հովհաննիսյանի խոսքով՝ իրեն միշտ հիացրել է Վարդապետի՝ ժամանակի հարաբերություններն առաջադեմ կերպով համապարփակ կարգավորելու տաղանդը, նրա գրչի ճկունությունն ու մտքի թռիչքը, այն, թե ինչ հանճարեղ կերպով է մեծանուն գիտնականը միավորել Աստվածաշնչյան կանոնները, հայոց կանոնական և սովորութային իրավունքը: ՀՀ արդարադատության նախարարը նշել է, որ Պատմիչի վկայությամբ՝ Վարդապետը երկար տարիներ «Դատաստանագիրքը» անավարտ էր համարում, քանի որ, ըստ նրա՝ օրենսգրքերը երբեք կատարյալ և ավարտուն չեն կարող լինել. ժամանակի, միջավայրի և իրադրության պահանջով միշտ ենթակա են փոփոխման, լրացման ու կատարելագործման: Ուստի, առաջադեմ մտածողը խնդրում է հետնորդներին, որպեսզի լրացնեն ու կատարելագործեն: Վարդապետը խորապես գիտակցում էր, որ իրավունքը և օրենսդրությունը տարբեր ժամանակներում, տարբեր երկրների և ժողովուրդների մոտ տարբեր է և առանձնահատուկ, ուստի, յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ընտրի իր կարգերին ու ժամանակին համապատասխանող նորմեր: Ելույթի վերջում Ա. Հովհաննիսյանը նշել է, որ մեր գործունեության ընթացքում, պետք է հետևենք Մ. Գոշի այն մտքին, որ արդարությունը պետք է լինի անաչառ, անկաշառ ու արդարացի և որ օրենքին ենթարկվելը պարտադիր է բոլորի համար: Ողջունելով ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությունը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը խորհրդանշական է համարել ՀՀ փաստաբանների պալատի բակում Գոշի դիմաքանդակի տեղադրումը, քանի որ Մխիթար Գոշն էր հենց իր Դատաստանագրքում խոսել դատավարության, դատ ու դատաստանի, մարդու իրավունքների մասին: Նա նկատել է, որ դրանք ունեն այնպիսի արդիական նշանակություն, որ այսօր ընկալվում են՝ որպես եվրոպական քաղաքակիրթ արժեքներ: Մարդու իրավունքների պաշտպանը անգնահատելի է համարել փաստաբանների դերը Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարության կայացման գործում և, հետևաբար նաև՝ Մխիթար Գոշի ներկայացրած սիզբունքներն իրագործելու հարցում:

Ելույթի վերջում Արման Թաթոյանն ասել է, որ այսպիսի միջոցառումները հնարավորություն են տալիս ևս մեկ անգամ քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելու հայ իրավական մտքի հարուստ պատմությունը և ապացուցելու, որ դրանք մեր իրավական համակարգի պատմական հիմքերն են կազմում:

Ելույթ են ունեցել նաև «Մխիթար Գոշի ժառանգությունը. Պատմություն և արդիականություն» գիտագործնական ձեռնարկի հեղինակ Գառնիկ Սաֆարյանը, գրող հրապարակախոս, հասարակական գործիչ Ջորի Բալայանը:
Փաստաբան Ալինա Ենգոյանի կատարմամբ հնչել է Կոմիտասի «Տեր ողորմեա» ստեղծագործությունը:
Փաստաբանների երեխաների ջանքերով բեմադրվել է Մեծ Վարդապետ Մխիթար Գոշի առակներից մեկը:

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՓԱՍԱՐԱՆԱՆԵՐԻ ԳԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՓԱՍԱՐԱՆԱՆԵՐԻ ԳԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })